# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.08.2018թ.

## ՄԻՋԱՆԿՅԱԼ ՈՐՈՇՈՒՄ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ԱՄ-2018/121**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության 07.08.2018թ. ԴՎԱ/2948 գրության հիման վրա «Ֆորտունա Սփայսիզ» և «Ավանգարդ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու մասին ՀՀ ֆինանսների նախարարության 09.08.2018թ. թիվ 02/26-3/14428-18 գրությունը, ինչպես նաև հաշվի առնելով ընկերություններին ապացույցներ ներկայացնելու համար ժամկետ տրամադրելու և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերի բազմակողմանի ուսումնասիրելու անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով՝

## ՈՐՈՇԵՑԻ

«Ֆորտունա Սփայսիզ» և «Ավանգարդ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու

նպատակով նախաձեռնված ՍՑ-ԱՄ-2018/121 ընթացակարգի քննության ժամկետը երկարաձգել 10 օրացույցային օրով և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշման հրապարակման վերջնաժամկետ սահմանել 07.09.2018թ. ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ